ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ապրիլի 2022 թվականի № -Ա
ք.Երևան

«ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի մայիսի 23-ի №169Ա որոշմամբ «ՋԻՆՋ-ԱՐՓԱ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 19-ի №191Ա որոշմամբ «ԷՆԵՐՋԻ ՀԻԴՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ վերաձևակերպված «Ջերմուկհիդրո» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0621 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0621 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 2019 թվականի մարտի 23-ը Հանձնաժողով ներկայացնել Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), սակայն չի ներկայացրել, որի հիմքով նշված ժամկետը Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, համարվել է երկարաձգված մինչև 2020 թվականի հունվարի 19–ը,

բ) Ընկերությունը 2019 թվականի նոյեմբերի 4-ի, 2020 թվականի հունվարի 13-ի և 20-ի գրություններով (կից փաստաթղթերով) հայտնել է, որ պետական մարմնի

գործողությամբ պայմանավորված՝ առաջացել է ԼԷ №0621 լիցենզիայի պայմանների կատարման անհնարինության իրավիճակ, որը կապ չունի Ընկերության գործողությունների ու անգործության հետ և խնդրել է ԼԷ №0621 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի չկատարումը համարել ֆորս-մաժորային իրավիճակի հետևանք և Ընկերության նկատմամբ չկիրառել բացասական հետևանքներ: Մասնավորապես, չնայած «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության և Ընկերության միջև 2017 թվականի դեկտեմբերի 12-ին և 2018 թվականի ապրիլի 19-ին կնքված պայմանագրերի առկայության, որով համաձայնացվել է 1.4342 հա անտառային տարածքի հատման և վնասի հատուցման հարցերը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից Ընկերությանը բանավոր կերպով հայտնվել է, որ Կայանի կառուցման համար ծառերի հատում չի կարող իրականացվել: Տեղեկանալով այդ մասին՝ դեռևս 2019 թվականի մարտ ամսից Ընկերությունը դիմումներ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության բնապահպանության, հետագայում նաև շրջակա միջավայրի նախարարություն՝ խնդրելով վերացնել ծառերի հատման խոչընդոտները՝ անտառային տարածքում ճնշումային խողովակաշար անցկացնելու նպատակով: Մինչդեռ, չնայած պայմանագրերի առկայությանը ծառերի հատման խոչընդոտները մինչ օրս իրավասու մարմինների կողմից չեն վերացվել: Ավելին, Ջերմուկ համայնքում կայացած հանրային լսումների ժամանակ Ընկերությունը ներկայացրել է Կայանի կառուցման վերաբերյալ բոլոր մանրամասները, աշխատանքների նախագիծը, սակայն բնակիչները արտահայտում են դժգոհություն, ստեղծում են վեճեր, դեմ են արտահայտվում և այդ ամենի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, ինչը նույնպես առաջացրել է ֆորս-մաժորային իրավիճակ,

գ) ներկայացված փաստաթղթերի մեջ առկա է նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի №ԱշՀ/ԱրՊ/10987-17 գրությունը, որի համաձայն նախարարությունը չի առարկում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և Ընկերության միջև օրենսդրությամբ սահմանված կարգով սերվիտուտի պայմանագրի կնքմանը՝ տարածքում ծառերի և թփերի հատում չիրականացնելու պայմանով,

դ) Հանձնաժողովը 2020 թվականի հունվարի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի

համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու հարցի ուսումնասիրության նպատակով, որը երկու անգամ 10-ական օրով երկարաձգվել է,

ե) Վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի փետրվարի 1-ի գրությամբ ըստ էության կրկնել է իր 2019 թվականի նոյեմբերի 4-ի, 2020 թվականի հունվարի 13-ի և 20-ի գրություններով ներկայացրած հիմնավորումները՝ միևնույն ժամանակ տեղեկացնելով, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի №Աշհ/ԱրՊ/10987-17 գրությանը Ընկերությունը ծանոթացել է 2020 թվականի հունվար ամսին Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունում և պատրաստել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին ուղղված հայցադիմում, որով վիճարկելու է նշված գրությունը՝ ծառերի և թփերի հատում չիրականացնելու պայմանի մասով, ինչն էլ լրացուցիչ կներկայացվի: Ինչպես նաև հայտնել է, որ նշված գրությունն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության մերժումների պատճառը,

զ) Վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի փետրվարի 11-ի գրությամբ ներկայացրել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը և «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հասցեագրված գրությունները և խնդրել հնարավորություն տալ նշված վարչական վարույթի շրջանակում ներկայացնելու դիմումների պատասխանները, ինչպես նաև հայտնել, որ կներկայացվի ապացույց, թե Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի №Աշհ/ԱրՊ/10987-17 գրությունը երբ է հանձնվել Ընկերությանը: Ընկերությունը 2020 թվականի մարտի 4-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել միայն Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պատասխանը, իսկ մնացած պատասխանները ներկայացնելու համար խնդրել է երկարաձգել վարչական վարույթի ժամկետը, ընդ որում, նշված փաստաթղթերը մինչ օրս չեն ներկայացվել Հանձնաժողով,

է) Հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակում առկա փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության համար փոխօգնության կարգով 2020 թվականի մարտի 13-ի №ՍԱ/34.3/Մ2-12/936-20 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ Ընկերության բարձրացրած հարցերի վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը ստանալու նպատակով, և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ 30 օրով երկարաձգել է վերոնշյալ վարչական վարույթի ժամկետը,

ը) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2020 թվականի մարտի 16-ին Հանձնաժողով է ներկայացրել միջնորդություն՝ 2020 թվականի հունվարի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում քննվող №ՎԴ/1083/05/20 վարչական գործով դատական ակտ կայացնելը կասեցնելու վերաբերյալ: Միջնորդությանը կից ներկայացվել է №ՎԴ/1083/05/20 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2020 թվականի մարտի 9-ի որոշումը, որով վարույթ է ընդունվել Ընկերության հայցադիմումն ընդդեմ Հանձնաժողովի՝ էլեկտրական էներգիայի արտադրության ԼԷ №0621 լիցենզիայի շրջանակներում ներկայացված 6.775.000 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ երաշխիքային գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին,

թ) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը 2020 թվականի մարտի 25-ի №1/32/3262 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված Կայանի նախնական գնահատման հայտը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ վերադարձվել է լրակազմման և ներկայացված դիտողություններով լրակազմված հայտը մինչև տվյալ օրը չի ներկայացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և չի ստացել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն,

ժ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը, 2020

թվականի մարտի 25-ի №88Ա որոշմամբ կասեցրել է Ընկերության նկատմամբ 2020 թվականի հունվարի 24-ից հարուցված վարչական վարույթը՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/1083/05/20 գործով վերջնական դատական ակտի կայացումը,

ժա) 2022 թվականի ապրիլի 7-ին Հանձնաժողովում մուտքագրվել է №ՎԴ/1083/05/20 գործով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 3-ի որոշումը՝ օրինական ուժի մեջ մտնելու վերաբերյալ նշումով: Նշված որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2020 թվականի հունիսի 11-ի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2020 թվականի հունիսի 11-ի «Գործի վարույթը կարճելու մասին» որոշմամբ դատարանը եզրահանգել է, որ Ընկերության պահանջը՝ ԼԷ №0621 լիցենզիայի շրջանակներում ներկայացված 6.775.000 (վեց միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ երաշխիքային գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու մասին, ենթակա չէ դատարանում քննության,

ժբ) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա 2022 թվականի ապրիլի 12-ից Ընկերության նկատմամբ 2020 թվականի հունվարի 24-ից հարուցված վարչական վարույթը վերսկսվել է, ինչի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 11-ի № ԳԲ/34.3-Մ2-12/1091-2022 գրությամբ, որով Ընկերությանն առաջարկվել է նաև վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, նոր հանգամանքների և տեղեկությունների առկայության դեպքում, եռօրյա ժամկետում դրանք ներկայացնել Հանձնաժողով,

ժգ) Ընկերությունը վերսկսված վարչական վարույթի շրջանակում որևէ լրացուցիչ հիմնավորում Հանձնաժողով չի ներկայացրել,

ժդ) «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի համաձայն՝ ի թիվս այլնի Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած

կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

- 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը (լրիվ կամ մասնակի) պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձը նախկինում հանձնաժողով երաշխիք չի ներկայացրել, ներկայացրած երաշխիքի գործողության ժամկետը լրացել է, և (կամ) դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, ապա նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը,

ժե) Կարգի №3 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձի կողմից Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգվել է,

ժզ) Կարգի №3 հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար,

ժէ) Կարգի №3 հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ֆորս մաժոր են համարվում նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունը այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել սույն լիցենզիայով ամրագրված պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ լիցենզավորված անձը գործել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության,

ժը) Կարգի №3 հավելվածի 10.1-րդ կետի համաձայն՝ լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման լիցենզավորված անձի կողմից,

ժթ) Կարգի №3 հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ Կարգի 6-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված որոշման ընդունման դեպքում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է կամ դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, Կարգի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը:

իա) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №169Ա որոշմամբ ԼԷ№0621 լիցենզիայով ամրագրված՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու հիմքով երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում Ընկերությունը չի հիմնավորել Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած

լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերությունը, որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Մասնավորապես, Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել թվարկված հանգամանքների առկայությունը և դրանց ուղղակի առնչությունը լիցենզիայով ամրագրված՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու իր պարտավորության կատարման անհնարինության հետ, նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը ձեռնարկելու հանգամանքը, չի հիմնավորել, որ ինքը, գործելով օրենսդրության համաձայն, սահմանված ժամկետում Նախագիծը Հանձնաժողով չի ներկայացրել: Ընդհակառակը, ի պատասխան Հանձնաժողովի 2020 թվականի մարտի 13-ի №ՍԱ/34.3/Մ2-12/936-20 գրության՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունն 2020 թվականի մարտի 25-ի №1/32/3262 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված Կայանի նախնական գնահատման հայտը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ վերադարձվել է լրակազմման և ներկայացված դիտողություններով լրակազմված հայտը մինչև տվյալ օրը չի ներկայացվել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և չի ստացել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն: Ավելին, Հայաստանի Հանրապետության բնապահպանության և շրջակա միջավայրի նախարարությունների գրություններում չի հիշատակվում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի դեկտեմբերի 1-ի №Աշ/ԱրՊ/10987-17 գրությունը, ինչպես նաև ըստ էության չի արգելվում փորձաքննական դրական եզրակացության

դեպքում խողովակաշարի անցկացման նպատակով ծառեր և թփեր հատելու հանգամանքը, իսկ ինչ վերաբերում է այդ գրությունը ավելի ուշ ստանալուն, ապա այն հանդիսացել է ի պատասխան Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին ուղղված 2017 թվականի նոյեմբերի 8-ի գրության, ուստի Ընկերության պարտավորությունն էր հետամուտ լինել իր կողմից ներկայացված դիմումի պատասխան ստանալուն: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովի գնահատմամբ հանրային լսումներին բնակիչների արտահայտած դժգոհությունը ևս վերը շարադրված հիմնավորումների ուժով չի կարող դիտվել որպես Ընկերության՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորության կատարմանը խոչընդոտող ֆորս մաժորային իրավիճակ: Հաշվի առնելով նաև, որ Ընկերության ներկայացրած՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի ապրիլի 23-ի №01-559 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №185900037 բանկային երաշխիքի գործողության ժամկետն ավարտվել է 2020 թվականի օգոստոսի 19-ին, երաշխիքով սահմանված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կրում է Ընկերությունը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը և №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետը և 9-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Պարտավորեցնել Ընկերությանը՝ Նախագիծը Հանձնաժողով ներկայացնելու՝ ԼԷ №0621 լիցենզիայի պայմաններով ամրագրված ժամկետը Կարգի համաձայն 2-րդ անգամ երկարաձգված համարվելու հիմքով, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում 900005028130 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել 3,387,500 (երեք միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումար:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
ապրիլի 2022թ.